# Հայտերի ներկայացման հրավեր

Ամսաթիվը՝ 24 մայիսի 2017թ.
Վարկի համար և ծրագրի անվանումը՝ 3284-ARM (ԱԶԲ), Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր
Պայմանագրի համարը և անվանումը՝ A-04YN, Երևանի թիվ 135 դպրոցի կառուցում
Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 21 հունիսի 2017թ., ժամը 12:00

1. Հայաստանի Հանրապետությունը Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) ստացել է ֆինանսավորում Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի իրականացման համար: Միջոցների մի մասն օգտագործելու է վերոնշյալ պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Մրցույթը բաց է բոլոր իրավասու հայտատուների համար ԱԶԲ-ի անդամ-երկներից:
2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) («Պատվիրատուն») հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու հայտատուներին Երևանի թիվ 135 դպրոցի շինարարական աշխատանքների («Աշխատանքները») կատարման և ավարտելու համար:
3. Ազգային մրցակցային մրցույթը անց է կացվելու համաձայն ԱԶԲ-ի «Մեկ փուլ. Մեկ ծրար» ընթացակարգի և բաց է իրավասու երկրներից բոլոր Հայտատուների համար, ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթերում:
4. Միայն հետևյալ հիմնական որակավորումներով իրավասու Հայտատուները պետք է մասնակցեն տվյալ մրցույթում՝
   որակավորման պահանջները ներառում են. ա/ հաղթող Հայտատուի շինարարական աշխատանքների գծով միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք տարիների ընթացքում պետք է կազմի **1,375,000,000** ՀՀ դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման և/կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **1,165,000,000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **1,864,000,000** ՀՀ դրամից, գ/ հաղթող Հայտատուի նվազագույն ֆինանսական միջոցները պետք է լինեն՝ **153,000,000** ՀՀ դրամ մեկ կազմակերպության համար, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հաստատված **«Քաղաքացիական», «Էներգետիկ» և «Հիդրոտեխնիկական»** լիցենզիաներ:
5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մրցութային փաստաթղթերը ուսումնասիրելու համար Հայտատուները պետք է դիմեն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Արթուր Սողոմոնյանին
ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, 406 սենյակ, 4-րդ հարկ
Հեռ.՝ +374 60 501 560
Էլ-փոստ՝ procurement@atdf.am

6. Մրցութային փաստաթղթերը հայերեն լեզվով տեղադրված են www.gnumner.am և www.atdf.am կայքէջերում: Մրցութային փաստաթղթերի գնելու համար, իրավասու Հայտատուները պետք է.
   - դիմեն վերոնշյալ հասցեով պահանջելով «A-04YN, Երևանի թիվ 135 դպրոցի կառուցում» մրցութային փաստաթղթերը,
   - բանկային փոխանցումով վճարեն 3,000 ՀՀ դրամ չհատուցվող վճար:
7. Հայտատուները պետք է ներկայացնեն իրենց հայտը.
   - վերոնշյալ հասցեով,
   - վերջնաժամկետից ոչ ուշ՝ 21 հունիսի 2017թ., ժամը 12:00 :
   - Մրցույթի ապահովման հայտարարագիրը ներառյալ, ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթում, Մրցութային առաջարկները կբացվեն անմիջապես հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո մասնակցել ցանկություն հայտնած Հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ:
   - **Նախահաշիվը անհրաժեշտ է ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:**